**ՆԱԽԱԳԻԾ**

# ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՋՈՒԼՖԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2008-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովհաննես Կարապետի Ջուլֆակյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցի 2008-2016 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, քանի որ 2008 թվականից նշված տրանսպորտային միջոցը անսարքության պատճառով չի շահագործվել և գոյացել է գույքահարկի պարտավորություն, որը 2017 թվականի հունվարի 27-ի դրությամբ կազմել է ընդամենը 108458 (մեկ հարյուր ութ հազար չորս հարյուր հիսունութ)Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 75000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 33458 (երեսուներեք հազար չորս հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ: 2017 թվականի հունվարի 27-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 75000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Հովհաննես Կարապետի Ջուլֆակյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Երկ.գծի 19 շենք բնակարան 4 հասցեում, անձնագիր N AM 0285692, տրված 2011 թվականի մայիսի 04-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3604520347) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2017 թվականի դեկտեմբերի 25-ին N782 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Հովհաննես Կարապետի Ջուլֆակյանին սեփականության իրավունքով պատկանող MOSKVICH 412 IE մակնիշի, 45 SL 403 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2008-2016 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի տույժի 33458 (երեսուներեք հազար չորս հարյուր հիսունութ)Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Ռ.ՍԱՆՈՅԱՆ**

**Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ**

**Լ.ՋԻԼԱՎՅԱՆ**

**Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

Կատ. Ս. Մինասյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## << ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՋՈՒԼՖԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2008-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Քաղաքացի Հովհաննես Կարապետի Ջուլֆակյանին սեփականության իրավունքով պատկանող MOSKVICH 412 IE մակնիշի, 45 SL 403 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2008-2016 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելը պայմանավորված է նրանով, որ 2008 թվականից նշված տրանսպորտային միջոցը անսարքության պատճառով չի շահագործվել և գոյացել է գույքահարկի պարտավորություն, որը 2017 թվականի հունվարի 27-ի դրությամբ կազմել է ընդամենը 108458 (մեկ հարյուր ութ հազար չորս հարյուր հիսունութ)Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 75000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 33458 (երեսուներեք հազար չորս հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ: 2017 թվականի հունվարի 27-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 75000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## << ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՋՈՒԼՖԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2008-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Քաղաքացի Հովհաննես Կարապետի Ջուլֆակյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2008-2016 թվականների ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: